


ԱՅԵԿՈՒԲԻ ՎԵՐՍԱԿ



* Շր. 3 Սեպտ. — Է. օր Վերափոխման : Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ : Ժամարարն էր Հոդչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտլարեան :

— Ս. Հրեշտակապետաց եկեղեցին մնջ եւս մատուցուեցաւ Ս. Պատարագ եւ կատարուեցաւ տարելիցի Հոգեհանդիսում՝ Ս. Աթոռի մայրապետներէն Աղաւնի ձէվահիբճանի Հոգին համար : Պատարագեց Վանքի Տեսուչ Հոդչ. Տ. Սեւան վրդ. Ղարիբեան, իսկ հանգստեան կարգին նախազահեց Հոդչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտլարեան :

* Կիր. 4 Սեպտ. — Ը. օր Վերափոխման : Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մէր վերնատան Երաշխաւոր Ս. Աստուածածին մատոււրին մէջ : Ժամարարն էր Տաճարին Տեսուչը՝ Հոդչ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչտուր Լուս :

* Բ. 5 Սեպտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախազահեց Գերչ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան :

* Գ. 6 Սեպտ. — Ս. Յովակիմայ եւ Ամենայի ծնողաց Ս. Աստուածածնի, եւ Կոնսանցի Խւլարերից : Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, Հայր Յովսէփի դերեղմանին վրայ : Ժամարարն էր Հոդչ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեան :

* Շր. 10 Սեպտ. — Ս. Թովմայի առաքելոյն : Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գյխաղիր : Ժամարարն էր Հոդչ. Տ. Սեպուհ Արդ. Էրկիւնեան :

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախազահեց Գերչ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան :

* Կիր. 11 Սեպտ. — Գիւտ Գուտոյ Ս. Աստուածածնի : Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գեղարդանին վրայ : Ժամարարն էր Հոդչ. Տ. Գեղորդ Վրդ. Նազարեան : Երթուղարձի թափօրները զլսաւորեց Գերչ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան :

* Շր. 17 Սեպտ. — Նիկիոյ Ս. Ֆողովոյն (325) : Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գյխաղիր : Ժամարարն էր Մարտիրոյէն Ս. Քաղաք Ժամանած Ս. Առուիլ Միարան Հոդչ. Տ. Վաշէ Վրդ. Իգնատիոսեան :

* Կիր. 18 Սեպտ. — Բարեկենդան Ս. Խաչի պահոց : Ս. Պատարագը մա-

տուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մէր մատուռին մէջ։ Ժամա-
րին էր Հողչ. Տ. Բարսեղ Արդ. Գալէմտէրեան։

* Գլ. 20 Մեպտ. — Ս. Կոյսի ծննդեան Հանդիսաւոր նախատօնակը պաշտուե-
ցաւ Մայր Տաճարին մէջ։ Հանդիսապետն էր Գերձ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկ-
եան։

* Գլ. 21 Մեպտ. — Ծնունդ Ս. Աստուածածնի։ Առաւոտուն, Գերձ. Տ. Կիւ-
րեղ Եպս. Գարիկեանի զիաստութեամբ, Միարան Հայրեր ինքնաշարժներով՝
մեկնեցան Գեթօնեմանիի ձոր ու «Հրաշափառաշով մուտք գործեցին Ս. Աստ-
ուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեգմանին վրայ օրուան Հանդիսաւոր
Ս. Պատարագը մատոյց Գերձ. Հանդիսապետ Մրբազանը եւ քարողեց, ներկա-
յացնելով Ս. Կոյսի նկարագրին բարեմտանութիւնները եւ մանաւանդ տիպար
մօր մը յատկանիշները։

* Ուր. 23 Մեպտ. — Երեկոյեան ժամերգութենէն ետք, Ամեն. Պատրիարք Ս.
Հայրը Մայրագոյն Վարդապետութեան աստիճան չնորհեց Ս. Աթոռի Միարան
եւ Մարտիրոյ Հողեւոր Հողչ. Հողչ. Տ. Վաչէ Վրդ. Իղնատիոսեանին։

* Շր. 24 Մեպտ. — Տօն Եկեղեցւոյ ի նաւակատիս Ս. Խաչին։ Ս. Պատարա-
գը մատուցուեցաւ Ս. Գիխաղիր։ Ժամարարն էր Խթանաղուլէն Հիւրաբար Ս.
Աթոռ ժամանած Հողչ. Տ. Մանուկ Արդ. Երկաթեան։

— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած
համար Երացի Հանդիսաւոր նախատօնակին, որմէ ետք Ս. Խաչափարտի մո-
ւոնը թափօրով փոխադրեց Աւագ Մեղան։

— Գիշերասկիղրին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեղէցէ»ի եւ Հոկտեմ-
իարդերուն նախագահեց Գերձ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան։

* Կիր. 25 Մեպտ. — Տօն ՎերԱՅՍԱՆ Ս. ԽԱՉԻՒՆԻՆ. Օրուան Հանդիսաւոր Ա.
Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Մեղանին վրայ մատոյց Լուսարարացւու-
թ Գերձ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան։ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը Խախո-
սաց Մելոնեան բարերար եղբայրներ՝ Կարապետի եւ Գրիգորի Հողիներուն
Համար կատարուած Հողեւանդստեան տարեկան պաշտամունքին։ Ս. Պատա-
րագի երդեցողութիւնները կատարուեցան Ս. Յակոբեանց Երկուն երդախում-
բին կողմէ՝ զեկավարութեամբ Ս. Աթոռի դպրապետ Պր. Ս. Գայայճեանի։

— Կէսօրէ ետք, սոտուար բաղմութեան մը ներկայութեան, Մայր Տաճառին
մէջ կատարուեցաւ Խաչիերացի մէծահանդէս «Անդաստան»ը, նախագահու-
թեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր։

* Բլ. 26 Մեպտ. — Յիշատակ մեռելոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս.
Գիխաղիր։ Ժամարարն էր Հողչ. Տ. Գէսորդ Վրդ. Ղարիպեան։ Աստ կատար-
ւեցան Հողեւանդստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ եւ ապա գտիթը՝
Երան. Տ. Կիւրեղ Բ. Պատրիարք Հօր շիրմին վրայ, Հանդիսապետութեամբ
Գերձ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի։

* Շր. 1 Հոկտ. — Տօն Խաչի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գիխաղիր։
Ժամարարն էր Հողչ. Տ. Մեւան Վրդ. Ղարիպեան։ Լուսարարապետ Գերձ. Տ.
Հայրիկ Արքեպս. Ասլանեան կատարեց սարկաւագական ճեռադրութիւնը Տրց.
Ատեփան Որդիքեանի եւ գաղութիս եկեղեցասէր անդամներէն Մերոր Գոյու-
թեանի եւ Միհրան Գալայճեանի։

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերձ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս կատա-
րեց քահանայական կոչման արարողութիւնը Մտեփան Մրկ. Արդերեանի, Ա.
Լիմիածին մատուռին մէջ։

* Կիր. 2 Հոկտ. — Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի պահոց։ ԻՔ. Տարեդարձ
Օծման Տ. Վազգէն Ա. Կարողիկոսին Ամենայն Հայոց։ Ս. Պատարագը մա-

առեցուեցաւ. Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատուռին մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան։ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ասլանեան կատարեց քահանայական մեռնադրութիւնն ու օծումը Ստեփան Ստրկաւալին, զայն վերակոչելով Տ. Ասկի Արեղյայ։

— Եէ առէ Կոք, զարձեալ Ս. Էջմիածնի մատուռին մէջ, կատարուեցաւ վեցարի տրւչութիւնը նորընծային՝ ձեռամբ Լուսարարապետ Արքապան Հօր։

* Բւր. 7 Հոկտ.— Ս. Գէորգայ նախատօնակը պաշտուեցաւ Ղպտիներու Համառուն վանքի եկեղեցիին մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարդիկեան։

* Շր. 8 Հոկտ.— Ս. Գէորգայ օօրավարին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտիներու Ս. Գէորգ եկեղեցիին մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Մանուէլ Արդ. Երկաթեան։ Արարողութեան աւարտին, Միաբանութիւնը Հիւրասիրուեցաւ Ղպտիներու Եպիսկոպոդէն։ Երթ ու զարձի թափօրները գիտաւորեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարդիկեան։

— Կէսօրէ Կոք, վազուան Վարագայ Խաչի տօնին առիթով, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարդիկեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառքով մուտք դորձեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ մեր մատուռին մէջ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբատեղիներու այցելութեան Հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգ. Տ. Մանուէլ Արդ. Երկաթեան։

* Կիր. 9 Հոկտ.— Տօն Վարագայ Ս. Խաչին։ Գիշերային եւ առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ։ Ապա, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարդիկեան մատոյց օրուան Հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գիրեզմանին վրայ, քարոզեց օրուան և խաչին խորհուրդին չուրջ եւ Ս. Պատարագէն ետք նախացահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վաղգէն Ա. ի Գահակարութեան եւ Օծման 22-րդ տարեղարձին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին։

* Շր. 15 Հոկտ.— Ս. 72 աշակերտացն Քրիստոսի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գտնիթին մէջ դունուող Ս. Գէորգայ սեղանին միացաւ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Գէորգ. Տ. Գէորգ Վրդ. Եպիսկոպուս։

* Կիր. 16 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մերնատան մեր մատուռին մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Գէորգ. Տ. Գէղարդ Արդ. Տաւուտլարեան։

— Այսօր տեղի ունեցաւ Ռեմէլէ Ս. Գէորգ վանքի տարեկան ուխտագնացութեան տօնախմբութիւնը։ Հակառակ աննպաստ օդին, ստուար բազմութիւն մը հասած էր Ռեմէլէ, Երուսաղէմէն, Յոպագէն և Հայֆայէն։ Ս. Պատարագը մատոյց Հոգ. Տ. Ասոբետ Արդ. Պալեան։ Հանդիսութեանց նախադահեց եւ Ս. Գէորգի կեանքին ու նախատեկութեան մասին քարոզեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարդիկեան։ Երգեցողութիւնները կատարուեցան Ս. Յարութեանց երկու երգչախումբին կողմէ, ողեկավարութեամբ Ս. Աքոսի Դպրապետ Պր. Սահակ Գալայճեանի։

* Բւր. 21 Հոկտ.— Թարգմանչաց Հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարի ներքին մէջ, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ասլանեանի։

* Շր. 22 Հոկտ.— Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց (Տօն ազգային եւ եկեղեցական)։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Ակունին միացաւ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան։ Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան Համաձայն, Հոգեհանդստեան Հանդիսաւոր պաշ-

տամունք կատարուեցաւ Ս. Աթոռի եւ ազդիս բարերար Գալուստ Կիւլպէնկէնինի, արկնոց եւ ծնողաց Հոգիներուն համար, նախագահութեամբ Լուսարշատութեամբ գհուզ. Տ. Հայրիկ Արքեղիսկոպոսի:

* Կիր. 23 Հոկտ.— Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Աւղանին վրայ: Ժամարարն էր Ամերիկային հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Ս. Աւագուստիս Միաբարն Հոգ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Աւետիքեան, որ նաև բարողեց բարեպահական բարեպահաշտութեան մասին: Ս. Պատարագին ներկայ էր Ս. Աթոռի բարերար Տիար Ե. Մարտիկնան և իրեն ընկերացող այլ բարերարներ: Երդեցողութիւնները կատարուեցան բազմաձայն, Ս. Աթոռի երկսեռ երգչախումբն կողմէ:

* Աւր. 28 Հոկտ.— Այսօր, Մայր Տաճարի Աւագ Աւղանին վրայ իր անդրանիկ Ս. Պատարազը մատոյց նորընծաւ Հոգ. Տ. Ասկի Արդ. Որդիքեան:

* Շր. 29 Հոկտ.— Ս. Զորից Աւետարամչացն: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Աւղանին վրայ: Ժամարարն էր նորընծային վարժիչ-ուսուցիչը՝ Հոգ. Տ. Վաղարչ Վրդ. Խաչատուրեան: Այսօրուան Ս. Պատարագը Ս. Յարութեան Տաճարի նորոգութիւնները սկսելէն առաջ կը մատուցուէր Տաճարի գաւիթին արեւելակողմբ զանուազ Ս. Յովհաննէս Աւետարանին հայապատկան մատուռին մէջ:

* Կիր. 30 Հոկտ.— Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Բէ. 31 Հոկտ.— Ս. Յովսէփայ Աստուածահօրն: Ս. Պատարազը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի զերդրմանին վրայ: Ժամարարն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Աւեան Վրդ. Ղարիպեան: Երթ ու դարձի թափօրները զլիսաւորեց Հոգ. Տ. Գէորդ Վրդ. Նաղարեան:

* Շր. 5 Նոյմ.— Ս. Երկրտասան Վարդապէտացն: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Գանատայէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Արժ. Տ. Անդրակ Քհնյ. Խաչատուրեան:

— Կէսօրէ ետք, վաղուան Գիւտ Խաչի տօնին առթիւ, Ամեն. Պատրիարք Ս. Հօր զլիսաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառքով մուտք զործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի եւ Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք թափօրը բարձրացաւ վերջինին կից Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Ժամերդութիւնէն եւ նախատօնակէն ետք կատարուեցաւ Տնօրինական սրբաւողիներու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապիտն էր Հոգ. Տ. Զարեհ Վրդ. Թօփայեան:

* Կիր. 6 Նոյմ.— Գիւտ Խաչ: Գիշերային եւ առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ, կարճ գաղաքի մը ետք, Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Աւեան Վրդ. Ղարիպեան: Ազա կազմուեցաւ մեծահանդէս թափօր զլիսաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր, որ նախ իջաւ Գիւտ Խաչի այրը (որ 24 ժամուան համար մեր արամագրութեան տակ զրուած էր, բայտ իրաւական սովորութեան) եւ ապա բարձրանալով Ս. Գերեզմանին շրջափակը երիցս զարձաւ անոր եւ մէկ անպամ ալ Պատանատեղիին շուրջ: Ն. Ամենապատուութիւնը, ամպհովանիի ներքեւ եւ կենաց Փայտի մատունքը ձեռքին, կ'օրհնէր Տաճարը լեցնող ժողովուրդը: «Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութեանէն եւ ինձկարկութեանէ ետք թափօրը իջաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, ուր փակուեցաւ տպաւորիչ կրօնա-

կան այս հանդիսութիւնը, որ վերջինն է տարեկան հանդիսութիւններուն քր-
րիստոնէական մեծագոյն այս սրբավայրէն ներս :

* Շր. 12 Նոյմ.— Ա. Յովհաննու Ռակերերան հայրապետին : Ա. Պատարագը
մատուցուեցաւ Ա. Գևորգիիր : Ժամարարն էր Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տա-
ռաւտլարեան :

* Կիր. 13 Նոյմ.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի
Շերնատան մեր մատոււին մէջ : Ժամարարն էր Հոգչ. Տ. Բարսեղ Արդ. Պա-
լէմտէրեան :

* Ռւր. 18 Նոյմ.— Ա. Հրեշտակապետաց նախատօնակը պաշտուեցաւ հա-
մանուն եկեղեցիին մէջ : Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ
Արքիպոս . Առանեան :

* Շր. 19 Նոյմ.— Ա. Հրեշտակապետացն Գարբիկէի եւ Միհայէլի : Առաւօտ-
եան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Հրեշ-
տակապետաց եկեղեցիին մէջ : Ժամարարն էր Հոգչ. Տ. Վահան Վրդ. Թօփալ-
եան : Ա. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուե-
ցաւ Հոգեհանգստեան պաշտօն՝ Ա. Աթոռի բարերարուէի Աղաւնի Ճէվահիքա-
ւանի եւ պարագաներուն Հոգիներուն Համար՝ նախազահութեամբ Լուսարարա-
պետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի : Ապա Միհարանութիւնը պատուա-
սիրուեցաւ Վանքի Տեսչարանին մէջ՝ Տեսուչ Հոգչ. Տ. Սեւան Վարդապետի
կողմէ :

* Շր. 3 Դեկտ.— Տօն Ամենայն Սրբոց : Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա.
Գևորգիիր : Ժամարարն էր Հոգչ. Տ. Հայկապուն Արդ. Մելքոնեան :

— Ա. Կոյսի Ընծայման Հանդիսաւոր նախատօնակին ի Ա. Յակոբ նախազա-
հեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս . Գարբիկեան :

* Կիր. 4 Դեկտ.— Ընծայումն Ա. Աստուածածնի : Քարեկենդան Յիսենակի
պահոց : Առաւօտուն, Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս . Գարբիկեանի զլխաւորութեամբ,
Միհարան Հայրիկ ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի ճորը ու «Հրաշտ-
ափառ» ով մուտք գործեցին Ա. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ա. Գե-
րեզմանին վրայ օրուան Հանդիսաւոր Ա. Պատարագը մատոյց Գերշ. Հանդիսա-
պետ Սրբազնը եւ քարոզեց Ա. Կոյսի Ընծայման պարագաներուն մտսին, յոր-
որ կելով Ժառանգաւոր սաները որպէսզի իրենց կեանքը, Ա. Կոյսին օրինակու,
լիովին ընծայարերեն Աստուծոյ եւ մեր Ա. Եկեղեցիին ծառայութեան : Ա.
Պատարագէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշ-
տօն ազգային բարերար Կիւրեղապի Կիւրեղէնկեանի եւ Կիւրեղէնկեան դերդաստա-
նի ննջեցեալներուն Հոգիներուն Համար :

* Շր. 10 Դեկտ.— Ա. Գրիգորի Սխանչելագործին : Ա. Պատարագը մատուց-
ուեցաւ Ա. Գևորգիիր : Ժամարարն էր Հոգչ. Տ. Անկի Արդ. Որդիքեան :

* Կիր. 11 Դեկտ.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի
Շերնատան մեր մատոււին մէջ : Ժամարարն էր Հոգչ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպ-
եան :

* Ռւր. 16 Դեկտ.— Առաջին Լուսաւորչաց նախատօնակը պաշտուեցաւ
Մայր Տաճարին մէջ : Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ
Արքիպոս . Առանեան :

* Շր. 17 Դեկտ.— Ա. Առաքելոց եւ առաջին կուսանորչացն մերոց Թաղէռսի եւ Բարբողիմէռսի; Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Գլխաղիր: Ժամաւրիան էր Հոգէ, Տ. Բարսեղ Արդ, Գալէճտէրեան:

* Կիր. 18 Դեկտ.— Ա. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Անդանին վրայ: Ժամաւրարն էր Հոգէ, Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* ԲՀ. 19 Դեկտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճար Ամէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

* ԳՀ. 20 Դեկտ.— Տօն Ա. Հարցն Եզիպտացոց: Ա. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Մակարայ մատուքին մէջ: Ժամաւրարն էր, ըստ սույնութեան, Աստուգանահայրը՝ Հոգէ, Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան:

* ԴՀ. 21 Դեկտ.— Ա. Կոյսի Յղութեան տօնի հանգիստուոր նախատօնակը ի Ա. Յակոբ ուղաշտուեցաւ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

* ԵՀ. 22 Դեկտ.— Յղութիմն Ա. Աստուածածին: Առաւոտուն, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթուեմանի ձորը եւ Հարաշափառով մուտք դործեցին Ա. Աստուածածայ Տաճար, ուր Տիրամօր Ա. Գերեղմանին վրայ օրուան հանդիսւոր Ա. Պատարազը մատուց Գերշ. Հանդիսապետ Մրազանը:

* Շր. 24 Դեկտ.— Ա. Նիկողայոսի Սքանչելագործ Հայրապետին: Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Գլխաղիր: Ժամաւրարն էր Հոգէ. Տ. Ռուբէն Վրդ. Յուլիկիմեան: Վերաբերումբ կատարուեցաւ Տաճարի ներքին գաւիթին մէջ պանուող Ա. Նիկողայոսի սեղանին վրայէն:

* Կիր. 25 Դեկտ.— Բարեկենդան Ա. Յակոբայ պահոց: Ա. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Անդանին վրայ: Ժամաւրարն էր Հոգէ. Տ. Մայկա Արդ. Պարեան:

* Աւր. 30 Դեկտ.— Նախատօնակին ի Ա. Յակոբ նախադահեց Լուսարարակեան Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս. Ասլանեան:

* Շր. 31 Դեկտ.— Ա. Յակոբայ Մծբնայ Հայրապետին: Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Գլխաղիր: Ժամաւրարն էր Հոգէ. Տ. Հայկագուն Արդ. Մեղոննեան: Վերաբերումբ կատարուեցաւ եկեղեցին դասին մէջ սուրբին նկարով կառուցուած շարժական սեղանին վրայէն: